



## ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

### ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի  
ծնավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Դ. Նիկողոսյան

Արմավիր մարզի ք. Մեծամորի թիվ 1 հիմն. դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Ն. Վասիլյան



## Հետազոտություն

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի  
դասավանդման ընթացքում

## Բովանդակություն

1. Նախաբան	3
2. Գրականության ակնարկ	5
3. Գործնական համատեքստ	17
4. Եզրահանգումներ	19
5. Գրականության ցանկ	21



## Նախաբան

Ներկայումս մենք ապրում ենք գլոբալացման դարաշրջանում և մարդիկ անկախ այն բանից, թե երկրագնդի որ կետում են բնակվում, այլևս չեն կարող մեկուսանալ համաշխարհային իրողությունից:

### Հետազոտական աշխատանքի նպատակ՝

Առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ձևավորել այնպիսի արժեհամակարգ, որի շնորհիվ պատրաստ լինեն ժամանակի մարտահրավերներին, ունենան կայուն դիրքորոշում ցանկացած իրավիճակում և կարողանան իրենց ձեռքբերած արժեքները դարձնել ուղենիշ ամբողջ կյանքում:

### Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

1. Ժողովարդավարական մշակույթ
2. Վերաբերմունք, հարգանք
3. Քաղաքացիական դիրքորոշում, պատասխանատվություն
4. Ինքնավստահություն, սեփական <<ես>>-ի գիտակցում
5. Հմտություններ, քննադատական մտածողություն

Գլոբալացումը երկկողմանի գործընթաց է, որի արդյունքում մի կողմից, կարծես վտանգվում է առանձին մշակույթների ինքնությունը, բայց մյուս կողմից՝ այլ մշակույթների հետ շփման պրոցեսում առանձին մշակույթներ հնարավորություն են ստանում մտորելու իրենց ինքնության խնդրի շուրջ, վերջ ի վերջո հասկանալու, թե որն է այն իրական տարբերիչը, որն իրենց առանձնացնում է մյուս բոլոր մշակույթներից ու դառնում իրենց յուրակերպության հիմքը:

Ինչ խոսք, մշակույթների փոխազդեցությունները եղել են նաև անցյալում, դարեր ի վեր կողք կողքի հարևան ժողովուրդները միմյանցից փոխառել են սովորույթներ, բառեր, արվեստի տարբեր ձևերի տարրեր: Երկրագնդի վրա չկա որևէ մշակույթ, որը այլ մշակույթների ազդեցությանը ենթարկված չլինի: Մշակութային ինքնամեկուսացման գաղափարը անիրատեսական էր անցյալում, առավել ևս անիրատեսական է այժմ: Շատ կարևոր է, որ այսօր մարդը կրթության միջոցով ձեռք բերի որոշակի արժեքներ և հմտություններ, որոնք նրան հնարավորություն կտան տարբեր մշակույթների հետ շփվելիս և տարբեր մշակութային միջավայրերում հայտնվելիս և՛ պահպանել սեփական ինքնությունը, և՛ ձեռք բերել մյուս մշակույթին բնորոշ, բայց իր համար ցանկալի արժեքներն ու նորմերը: Միջմշակութային շփումներում ցանկալի արդյունքի հասնելու կարևորագույն դիրքորոշումը հանդուրժողականությունն է, որը հնարավորություն կտա խելամիտ վերլուծության շնորհիվ պահպանել սեփական մշակույթի ինքնության արժեքավոր տարրերը և ընդունել այլ մշակույթների ցանկալի արժեքները, նորմերն ու մոտեցումները: Հանդուրժողականությունը արժեք է, ինչպես նշում է Շվեյցերը, այն պետք է իմաստավորվի, վերապրվի սովորողի հոգում, որպեսզի դառնա նրա կենսական արժեքը: Ասվածից հասկանալի է, որ հանդուրժողականության ուսուցումը արժեքային կրթության տարր է, վերաբերմունքի ու դիրքորոշման բաղադրիչ: Գիտելիքներն ու հմտությունները նույնպես կարևոր են



հանդուրժողականություն ուսումնասիրելիս ,բայց նման ուսումնասիրության հիմնաքարը արժեքային մոտեցումն է:



## Գրականության ակնարկ

Մեր առօրյայում որևէ քայլ կատարելիս, մեր առջև ծառայած որևէ խնդիր լուծելիս մենք առաջնորդվում ենք որոշակի արժեքներով, որոնց ամբողջությունը կազմում է մեր արժեքային համակարգը:

Քարագործ երեք բանվորների հարցնում են, թե ինչով են նրանք զբաղված:

Առաջինը զարմացած ասում է.

- Չե՞ք տեսնում, քար են կրում:

Երկրորդ բանվորը կարծեք նեղանում է առաջադրված հարցից:

- Չե՞ք տեսնում, ընտանիքիս համար հաց են վաստակում,- ասում է նա:

Երրորդ բանվորն իր աշխատանքում արժևորում է բոլորովին այլ բան. նրա բերած հոգևորը : Նա ոգևորված պատասխանում է.

- Ես Փարիզի Աստվածամոր տաճարն եմ կառուցում:

Հետևյալ հանրահայտ պատմությունը ցույց է տալիս, որ նույն աշխատանքը մարդկանց համար կարող է ունենալ տարբեր արժեքներ, ինչը պայմանավորված է այդ մարդկանց արժեքային համակարգով և արժեքային կողմնորոշմամբ:

Ժողովրդավարության հիմնարար արժեքների դասավանդումը կարևոր է արդի հասարակության գործուն, մասնակցող և սրտացավ քաղաքացիներ ձևավորելու համար: Այդ արժեքներն իրենց էությանմբ մարդկային են, համամարդկային, բայց նաև քաղաքացիական որակներ են: Հաննա Արենդտն իր ,, Մարդկային իրադրություն,, փիլիսոփայական երկում ցույց է տալիս, որ յուրաքանչյուր մարդու հոգեկան որակների, մտածելակերպի և գործելակերպի կատարելագործումն անուղղակիորեն ազդում է ողջ հասարակության որակի վրա, քանի որ ինչպես Արիստոտելն է ասում՝ մարդը քաղաքական կենդանի է: Ակնհայտ է, որ որքան շատ լինեն հանդուրժողական անհատները, այնքան կբարձրանա հասարակական հարաբերությունների որակը, այնքան ավելի կառուցողական ու խաղաղ մթնոլորտ կտիրի հասարակությունում:

Վերջին տարիներին ավելի մեծ ուշադրություն է դարձվում կրթությանը՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության խթանման և պաշտպանության գործիք: Չնայած այն հանգամանքին, որ այս սկզբունքները տասնամյակներ

շարունակ եղել են հասարակությունների ու քաղաքական համակարգերի հիմնաքարերը՝ դրանք պետք է շարունակ պահպանել ու զարգացնել: Տնտեսական և քաղաքական ճգնաժամի ժամանակ էլ՝ ավելի ակնհայտ է դառնում, որ քաղաքացիները պետք է ի վիճակի և պատրաստակամ լինեն ակտիվորեն ներգրավվելու իրենց արժեքների ու սկզբունքների պաշտպանության գործին: Ժողովրդավարական գործընթացներին ակտիվորեն մասնակցելու կարողության ձեռքբերումն ու պահպանումը սկսվում է վաղ մանկության շրջանում և շարունակվում ողջ կյանքի ընթացքում: Կարողունակությունների ձեռք բերման գործընթացը դինամիկ է և երբեք չի ավարտվում: Հանգամանքները փոխվում են, և անհրաժեշտ է, որ



մարդիկ զարգացնեն առկա կարողունակություններն ու ձեռք բերեն նորերը՝ արձագանքելով իրենց ապրած միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին:

Ուսումնական հաստատությունները կարևոր դեր ունեն այս հարատև գործընթացում: Երեխաների մեծ մասը հանրային տիրույթի հետ առաջին շփումն ու առնչությունն են ունենում դպրոցում, և դպրոցը պետք է լինի այն վայրը, որտեղից սկսվում է արժեհամակարգի ձևավորումը, ժողովրդավարական կրթությունը:

Ժողովրդավարական կրթությունը պետք է լինի անձի լիարժեք կրթության համընդգրկուն և շաղկապված տեսլականի մի մասը և կրթության տեսլականը պետք է ներառի չորս գլխավոր նպատակ.

- պատրաստել աշխատաշուկային.
- պատրաստել կյանքին՝ որպես ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացի.
- ապահովել անձնային զարգացում.
- ձևավորել և պահպանել լայն գիտելիքի բազա:

Բոլոր այս չորս նպատակներն անհրաժեշտ են, որպեսզի անհատները կարողանան ապրել անկախ կյանքով և որպես ակտիվ քաղաքացի մասնակցություն ունենան ժամանակակից, արագ փոփոխվող հասարակարգերին՝ բոլոր բնագավառներում: Դրանք հավասարապես արժեքավոր են և փոխլրացնում են միմյանց: Օրինակ՝ աշխատունակության համար մարդկանց անհրաժեշտ կարողունակություններից շատերը, օրինակ՝ վերլուծական ունակությունը, հաղորդակցման հմտություններն ու խմբում աշխատելու ընդունակությունը ևս օգնում են դարձնել նրանց ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացիներ և հիմնարար նշանակություն ունեն նրանց դաստիարակության համար:

Քանի որ մշակութային, տեխնոլոգիական և ժողովրդագրական փոփոխությունները պահանջում են անընդհատ սովորելու, մտազննելու և աշխատանքում նոր մարտահրավերներին և հնարավորություններին համապատասխան գործելու պատրաստակամություն՝ թե՛ մասնավոր, և թե՛ հանրային կյանքում, հետևաբար բոլոր չորս նպատակներին անհատները պետք է հետամուտ լինեն իրենց կյանքի ողջ ընթացքում: Այս ամենի իրականացման համար հիմք է հանդիսանում դպրոցում ուսումնասիրված տարբեր առարկաների դասապրոցեսում ձեռք բերված գիտելիքներն ու ձևավորված արժեհամակարգը:

Արժեհակարգի մեջ ներառված է անցյալի հարուստ փորձը, որը ժամանակի ընթացքում արժևորվել ու դարձել է համընդհանուր, որն էլ աշակերտների մեջ սերմանում է հայրենասիրություն, հարգանք սեփական ժողովրդի պատմության, ազգային և համամարդկային մշակութային արժեքների նկատմամբ: Կարևորվում է ճանաչողական գործունեության ընթացքում ձեռք բերած գիտելիքները, որոնք սովորողի մոտ վերածվում են կարողության: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր գործոնների ազդեցության ներքո՝ հասարակական, սոցիալական, ընտանեկան, բարոյական, ազգային և այլն: Հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները՝ արդի մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողի ազգային գիտակցության ձևավորումն իր մշակույթին համապատասխան՝ չանտեսելով համամարդկային, համընդհանուր արժեքները:

Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընդգրկուն հասկացություն է: Այն իր մեջ ներառում է համամարդկային արժեքների բույլ. արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հանդուրժողականության, հոգևոր, մշակութային և ազգային արժեքների համախումբն է, որն առանձնահատուկ տեղ է



գրադեցնում անձի ներդաշնակ, բազմակողմանի զարգացման համար: Արժեհամակարգում արժեքները փոխկապակցված են և լրացնում են միմյանց, ուստի մանկավարժական մոտեցում չենք ցուցաբերի, երբ կարևորենք դրանցից մեկը կամ մի քանիսը: Արժեհամակարգը ամբողջական է ու լիակատար, երբ ներդաշնակորեն, տրամաբանական հաջորդականությամբ բաղադրիչները փոխլրացնում են միմյանց: Արժեհամակարգի ձևավորման և հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և առանձնահատուկ տեղ ունեն բոլոր ուսումնասիրվող առարկաները:

Մատաղ սերնդի մեջ ճշմարիտ արժեքների ձևավորումը դաստիարակության հիմնական խնդիրն է, սակայն ինչ ասել է ճշմարիտ արժեք: Այս հարցին պատասխանելը խիստ դժվար է ոչ միայն այն պատճառով, որ տարբեր մարդիկ „արժեք,, և „ճշմարիտ արժեք,, հասկացությունների մասին տարբեր պատկերացումներ ունեն, այլ նաև այն պատճառով, որ նրանք ժամանակի ընթացքում փոփոխվում են. երբեմնի գերակա արժեքները դառնում են երկրորդական, իսկ երկրորդական արժեքները ձեռք են բերում գերակայության կարգավիճակ: Մանկավարժության տեսության մեջ արժեքների ձևավորման հարցերը արծարծելիս այս պարագան հաշվի առնելը հույժ կարևոր է:

Սովորողը, հաղորդակցվելով տարբեր արժեքների հետ, ձևավորվում է իբրև ստեղծագործական անհատականություն: Տարիքային առանձնահատկություններից ելնելով սովորողի մոտ ձևավորվում է որոշակի վերաբերմունք աշխարհի նկատմամբ, սեփական անձի նկատմամբ, որն իրականացվում է հասարակական դաստիարակության և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Կրթական տարբեր աստիճաններում աշակերտի մոտ ձևավորվում է աշխարհընկալման տարբեր դրսևորումներ: Աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն ընտանիքները, ընկերակցությունները և մշակութային միջավայրը: Չնայած սովորողը հակված է ընդօրինակել որոշ արժեքներ ուրիշներից, այնուամենայնիվ ունի իր անձնական արժեքները, որոնք իր եսի կարևոր մասն են կազմում: Արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի դաստիարակչական բնույթի հիմնական գաղափարները, օրենքները, հասկացությունները ուսուցչին հնարավորություն են տալիս առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները նպաստում են սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը՝ նրանց հնարավորություն տալով ինքնադրսևորվել կյանքում: Ուսուցչի ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, լայն մտահորիզոն, հասարակական ակտիվություն ունեցող անհատներ, նրա ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր նպատակներից է:

Արժեքներն ընդհանուր համոզմունքներ են, որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքում: Դրանք գործողության շարժառիթ են և նաև ծառայում են որպես ուղենիշային սկզբունքներ՝ որոշելիս, թե ինչպես գործել: Արժեքներն



ավելին են, քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ունեն նորմատիվ հրահանգավորման բնույթ՝ ներկայացնելով, թե ինչ է պետք անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում: Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում թե՛ սեփական անձի, և թե՛ այլոց գործողությունները գնահատելու, կարծիքները, մոտեցումներն ու վարքը հիմնավորելու, այլընտրանքներից որևէ մեկն ընտելու, վարքագիծը պլանավորելու և այլոց վրա ազդել փորձելու համար:

Կարողունակություններին ծանոթ ընթերցողները, թերևս, կգարմանան այս մոդելում որպես կարողունակության առանձին տեսակ արժեքները տեսնելով, բայց այն ներկայացվել է տեխնիկական իմաստով՝ հոգեբանական ռեսուրսներ (վերաբերմունք, հմտություններ և գիտելիք), որոնք հարկ է մոբիլիզացնել և գործածության մեջ դնել ժողովրդավարական և միջմշակութային իրավիճակների պահանջմունքներն ու մարտահրավերները բավարարելու համար: Արժեքներն առանցքային նշանակություն ունեն կարողունակությունների կոնցեպտուալացման համատեքստում, որը թույլ է տալիս լինել ժողովրդավարության մշակույթի մասնակից: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ առանց այս կարողունակությունների հիմքում ընկած որոշակի արժեքների մասնավորեցման, դրանք չէին լինի ժողովրդավարական կարողունակություններ, այլ փոխարենը կլինեին ավելի ընդհանուր բնույթի քաղաքական կարողունակություններ, որոնք կարելի կլինեի կիրառել հանուն քաղաքական համակարգի բազմաթիվ այլ տեսակների, այդ թվում՝ հակաժողովրդավարական համակարգերի:

Ժողովրդավարության մշակույթի մասնակիցը լինելու համար վճռորոշ է արժեքների երեք խումբ

1. Մարդկային արժանապատվության և մարդու իրավունքների արժևորում
2. Մշակութային բազմազանության արժևորում
3. Ժողովրդավարության, արդարադատության, արդարության, հավասարության և իրավունքի գերակայության արժևորում

Արժեքների առաջին խումբը հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ բոլոր անհատներն ունեն հավասար արժեք ու հավասար արժանապատվություն, հավասար հարգանքի արժանանալու և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նույն շարքից օգտվելու իրավունք, և պետք է համապատասխան վերաբերմունքի արժանանան: Այս համոզմունքը ենթադրում է, որ մարդու իրավունքները համամարդկային են, անօտարելի ու անբաժանելի և առանց տարբերակման տարածվում են բոլորի վրա. մարդու իրավունքներն ապահովում է պաշտպանությունների նվազագույն շեմ, որը շատ կարևոր է մարդկանց՝ արժանապատիվ կյանքով ապրելու համար, և մարդու իրավունքներն աշխարհում ապահովում են ազատության, հավասարության, արդարության և խաղաղության այս առանցքային հիմքը: Ըստ այդմ, արժեքների այս շարքը ներառում է՝

1. գիտակցում, որ բոլոր մարդկանց բնորոշ է ընդհանուր մարդասիրությունը և հավասար արժանապատվությունը՝ անկախ նրանց մշակութային պատկանելությունից, կարգավիճակից, ունակություններից կամ հանգամանքներից.
2. գիտակցում, որ մարդու իրավունքները համամարդկային, անօտարելի և անբաժանելի են.
3. գիտակցում, որ մարդու իրավունքները պետք է միշտ խթանել, հարգել ու պաշտպանել.
4. գիտակցում, որ հիմնարար ազատությունները միշտ պետք է պաշտպանված լինեն, քանի դեռ դրանք չեն ստորադասում կամ խախտում այլոց մարդու իրավունքները.





5. գիտակցում, որ մարդու իրավունքները հիմք են ծառայում որպես հասարակության հավասար անդամներ միասին ապրելու, ինչպես նաև աշխարհում ազատության, արդարության և խաղաղության համար:

Արժեքների երկրորդ խումբը հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ հարկ է դրական վերաբերել, գնահատել ու փայլաբերել այլ մշակութային պատկանելիություններին, մշակութային փոփոխականությանն ու բազմազանությանը և տեսակետների, կարծիքների ու գործելակերպերի բազմազանությանը: Այս համոզմունքը ենթադրում է, որ՝ մշակութային բազմազանությունը կարևոր արժեք է հասարակության համար, մարդիկ կարող են սովորել և օգուտ քաղել այլոց բազմակարծությունից, մշակութային բազմազանությունը պետք է խթանել և պաշտպանել, պետք է ոգևորել մարդկանց, որ շփվեն միմյանց հետ՝ անկախ մշակութային տարբերությունների մասին իրենց ընկալումներից, իսկ միջմշակութային երկխոսությունից պետք է օգտվել հասարակության մեջ որպես հավասարներ՝ միասին ապրելու ու ժողովրդավարական մշակույթը զարգացնելու համար:

Նկատենք, որ մարդու իրավունքների արժևորման և մշակութային բազմազանության արժևորման միջև առկա է պոտենցիալ լարվածություն: Մարդու իրավունքները առաջնային արժեքային հիմք ընդունած հասարակությունում մշակութային բազմազանության արժևորումը որոշակի սահմաններ ունի: Այս սահմանները գծվում են մյուսների մարդու իրավունքները և ազատությունները խթանելու, հարգելու և պաշտպանելու անհրաժեշտությամբ: Այդ պատճառով, այստեղ ենթադրվում է, որ մշակութային բազմազանությունը միշտ էլ պետք է արժևորվի, քանի դեռ այն չի խախտում մյուսների մարդու իրավունքներն և ազատությունները:

Արժեքների այս երկրորդ խումբը, ներառում է՝

1. գիտակցում, որ մշակութային բազմազանությունն ու բազմակարծությունը, աշխարհայացքներն ու գործելակերպերը մեծ արժեք են հասարակության համար և զարգացման հնարավորություն են ընձեռում հասարակության բոլոր անդամներին.
2. գիտակցում, որ բոլոր մարդիկ ունեն տարբեր լինելու և սեփական տեսակետները, դիրքորոշումները, համոզմունքներն ու կարծիքներն ընտրելու իրավունք
3. գիտակցում, որ մարդիկ պետք է միշտ հարգեն մյուսների տեսակետները, դիրքորոշումները, համոզմունքներն ու կարծիքները, եթե դրանք ուղղված չեն մյուսների մարդու իրավունքների և ազատությունների ստորադասմանը.
4. գիտակցում, որ մարդիկ միշտ պետք է հարգեն այլոց կենսակերպն ու գործելակերպերը, եթե դրանք չեն ստորադասում կամ խախտում մյուսների իրավունքները և ազատությունները.
5. գիտակցում, որ մարդիկ պետք է լսեն և մասնակցեն իրենցից տարբեր ընկալվող մարդկանց հետ երկխոսությանը:

Արժեքների երրորդ խումբը հիմնված է մի խումբ համոզմունքների վրա առ այն, թե հասարակություններն ինչպես պետք է գործեն և կառավարվեն, ներառյալ այն համոզմունքները, որ բոլոր քաղաքացիները պարտադիր պետք է հնարավորություն ունենան հավասար կերպով մասնակցելու (ուղիղ կամ ոչ ուղղակի ձևով՝ ընտրված ներկայացուցիչների միջոցով) հասարակությունը կարգավորող օրենքների սահմանման և ստեղծման ընթացակարգերին, բոլոր քաղաքացիները հասարակության ներսում պետք է ակտիվորեն մասնակցեն ժողովրդավարական գործընթացներին (ընդունելով այն հավանականությունը, որ երբեմն այս մասնակցությունը կարող չլինել խղճի բերումով կամ այլ հանգամանքով պայմանավորված), թեև որոշումները պետք է կայացվեն մեծամասնության կողմից, սակայն նաև պետք է ապահովել արդարացի և հավասար վերաբերմունք բոլոր տեսակի



փոքրամասնությունների նկատմամբ, սոցիալական արդարությունը, անկողմնակալությունը և հավասարությունը պետք է աշխատի հասարակության բոլոր մակարդակներում, իսկ իրավունքի գերակայությունը պետք է գերիշխի այնպես, որ հասարակության յուրաքանչյուր անդամ արժանանա ազնիվ, արդար, անկողմնակալ և հավասար վերաբերմունքի՝ բոլորի կողմից ընդունված օրենքներին համապատասխան: Արժեքների այս խումբը, հետևաբար, ներառում է՝

1. աջակցություն ժողովրդավարական գործընթացներին և ընթացակարգերին (միաժամանակ գիտակցելով, որ գործող ժողովրդավարական ընթացակարգերը կարող են օպտիմալ չլինել և որ դրանք երբեմն կարող են ժողովրդավարական միջոցներով փոփոխվելու և կատարելագործվելու կարիք ունենալ)։
2. ակտիվ քաղաքացիության կարևորության գիտակցումը (միաժամանակ գիտակցելով, որ չմասնակցելը երբեմն կարող է հիմնավորվել խղճից կամ հանգամանքից ելնելով)։
3. քաղաքական որոշումների կայացմանը քաղաքացիների ներգրավվածության կարևորության գիտակցումը։
4. քաղաքացիական ազատությունների, այդ թվում՝ փոքրամասնական դիրքորոշում ունեցող անձանց քաղաքացիական ազատությունները պաշտպանելու անհրաժեշտության գիտակցում։
5. աջակցություն հակամարտությունների և վեճերի խաղաղ լուծմանը։
6. սոցիալական արդարության և սոցիալական պատասխանատվության զգացում՝ հանուն հասարակության բոլոր անդամների նկատմամբ արդար և ազնիվ վերաբերմունքի, ներառյալ հավասար հնարավորություններ բոլորի համար՝ անկախ ազգային ծագումից, էթնիկ պատկանելությունից, ռասայից, կրոնից, լեզվից, սեռից, գենդերից, քաղաքական կարծիքից, ծննդից, սոցիալական ծագումից, ունեցվածքից, հաշմանդամությունից, սեռական կողմնորոշումից կամ այլ կարգավիճակից։
7. նպաստել իրավունքի գերակայությանը և բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասար և անկողմնակալ վերաբերմունքին՝ օրենքի շրջանակներում, որպես արդարադատության ապահովման միջոց:

## **Վերաբերմունք**

Վերաբերմունքը ընդհանուր առմամբ հոգեբանական կողմնորոշումն է, որ անհատը որդեգրում է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի նկատմամբ: Վերաբերմունքը սովորաբար կազմված է չորս բաղադրիչից՝ վերաբերմունքի օբյեկտի մասին համոզմունք և կարծիք, տվյալ օբյեկտի նկատմամբ հույզ կամ զգացողություն, գնահատական (դրական կամ բացասական) օբյեկտին, օբյեկտի նկատմամբ որոշակի եղանակով վարվելու միտում: Ժողովրդավարության մշակույթի համար կարևոր հինգ մոտեցումներն են.

1. զգայունություն մշակութային բազմազանության և սեփականից տարբեր՝ աշխարհայացքների, համոզմունքների, արժեքների և գործելակերպերի նկատմամբ։
2. հետաքրքրասիրություն և հետաքրքրվածություն այլ մշակութային կողմնորոշումների և պատկանելությունների ու այլ աշխարհայացքների, համոզմունքների, արժեքների և գործելակերպերի մասին իմանալու և բացահայտելու նկատմամբ։
3. այլոց աշխարհայացքների, համոզմունքների, արժեքների և գործելակերպերի վերաբերյալ գնահատականը և թերահավատությունը կասեցնելու պատրաստակամություն և սեփական աշխարհայացքի, համոզմունքների, արժեքների և գործելակերպերի «բնականությունը» հարցականի տակ դնելու պատրաստակամություն։
4. իրենցից տարբեր ընկալվող անձանց հետ առնչվելու հուզական / էմոցիոնալ պատրաստվածություն։



5. «հավասարը՝ հավասարին» հարաբերությունների պայմաններում՝ այլ մշակութային պատկանելիության ընկալվող անձանց հետ աշխատելու, համագործակցելու և շփվելու հնարավորություն փնտրելու կամ դրանից օգտվելու պատրաստակամություն

### **Հարգանք**

Հարգանքը վերաբերմունքն է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի նկատմամբ, երբ այդ վերաբերմունքի օբյեկտը գնահատվում է որոշակի կարևորություն, արժողություն կամ արժեք ունեցող, ինչն էլ երաշխավորում է դրական վերաբերմունք և պատկառանք: Կախված հարգանքի օբյեկտի բնույթից՝ հարգանքը կարող է տարբեր ձևերով դրսևորվել (օր.՝ հարգանքը դպրոցի/հաստատության կանոնների նկատմամբ, հարգանքը ծերերի իմաստնության նկատմամբ, հարգանքը բնության նկատմամբ):

Ժողովրդավարության մշակույթի համատեքստում հատկապես կարևոր հարգանքի տեսակ է տարբեր մշակութային պատկանելության կամ տարբեր համոզմունքների, կարծիքների և գործելակերպերի տեր անձանց նկատմամբ ներդաշնակեցված հարգանքը: Հարգանքի այս տեսակը ենթադրում է բոլոր մարդկային էակների ներքին արժանապատվություն ու հավասարություն և նրանց անօտարելի մարդու իրավունքը՝ ընտրելու իրենց պատկանելությունը, համոզմունքները, կարծիքները կամ գործելակերպերը: Կարևորը որ, այս տեսակի հարգանքը չի պահանջում յուր անձի և դիմացինի միջև հնարավոր՝ երբեմն նաև էական ու խորը իրական տարբերությունների կրճատում կամ անտեսում, ինչպես նաև չի պահանջում հարգանքի օբյեկտի հետ համաձայնություն, հաստատում կամ փոխարկում: Փոխարենն այս մոտեցումը ենթադրում է դիմացինի արժանապատվության և սեփական պատկանելություններ, համոզմունքներ, կարծիքներ կամ գործելակերպեր ունենալու իրավունքի դրական գնահատում՝ միաժամանակ գիտակցելով և ընդունելով յուր անձի և դիմացինի տարբերությունները:

«Հարգանք» հասկացությունը՝ «հանդուրժողականություն» հասկացությունից ավելի լավ է արտացոլում այն մոտեցումը, որն անհրաժեշտ է ժողովրդավարության մշակույթի համար: Որոշ համատեքստերում հանդուրժողականությունը կարող է արտահայտել պարզապես հանդուրժելու կամ դրա հետ հաշտվելու կապը և այնպիսի մի բան հանդուրժելը պաշտպանող դիրքորոշում, որը մարդը նախընտրում է չհանդուրժել: Հանդուրժողականությունը երբեմն կարող է մեկնաբանվել նաև որպես ուժի դրսևորում, որը թույլ է տալիս տարբերության գոյությունը՝ պարզապես հանդուրժելով այն, և հանդուրժողականության այս քայլով՝ ընդլայնելով անհատին հանդուրժելու սեփական ուժն ու իշխանությունը: Հարգանքը պակաս անորոշ հասկացություն է, քան հանդուրժողականությունը՝ հիմնված լինելով դիմացինի արժանապատվության, իրավունքների և ազատությունների ճանաչման և սեփական «ես»-ի ու դիմացինի՝ հավասարը հավասարին հարաբերվելու վրա:

Ըստ այդմ, հարգանքը ներառում է՝

1. դրական վերաբերմունք և պատկառանք ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի նկատմամբ՝ հիմնվելով վերջիններիս հատուկ կարևորություն, արժողություն կամ արժեք ունենալու դատողության վրա.
2. դրական վերաբերմունք և պատկառանք այլ անձանց նկատմամբ՝ որպես հավասարազոր մարդկային էակներ, ովքեր ունեն նույն արժանապատվությունը և մարդու իրավունքների ու ազատությունների ճիշտ նույն շարքը՝ անկախ իրենց որոշակի մշակութային պատկանելության, համոզմունքների, կարծիքների, կենսաոճի կամ գործելակերպերի.
3. դրական վերաբերմունք և պատկառանք այլ անձանց որդեգրած համոզմունքների, կարծիքների, կենսաոճի և գործելակերպի նկատմամբ, քանի դեռ դրանք չեն ստորադասում կամ խախտում այլոց արժանապատվությունը, մարդու իրավունքները կամ ազատությունները:



## **Քաղաքացիական դիրքորոշում**

Քաղաքացիական դիրքորոշումը մոտեցում է համայնքի կամ սոցիալական խմբի նկատմամբ: «Համայնք» եզրույթն այստեղ օգտագործվում է մի այնպիսի սոցիալական կամ մշակութային խումբ ներկայացնելու համար, որն ավելի մեծ է, քան անձի ընտանեկան կամ ընկերական անմիջական շրջանակը և որին նա պատկանելու զգացում ունի:

Քաղաքացիական դիրքորոշումը ներառում է՝

1. համայնքին պատկանելու և համայնքի հետ նույնականացվելու զգացում.
2. համայնքի մյուս անդամների ուշադրություն, ըստ այդ անձանց միջև փոխկապակցվածության և այդ անձանց վրա՝ սեփական գործողությունների ներգործության.
3. համայնքի այլ անձանց հետ համերաշխության զգացում, այդ թվում նրանց հետ համագործակցելու և աշխատելու պատրաստակամություն, նրանց իրավունքների և բարոյության նկատմամբ մտահոգվածության և հոգատարության զգացում, համայնքի ներսում հզորացումից և առավելություններից զուրկ անձանց պաշտպանելու պատրաստակամություն.
4. համայնքի հարցերի և խնդիրների նկատմամբ հետաքրքրվածություն և ուշադրություն.
5. քաղաքացիական պարտքի զգացում, համայնքային կյանքին ակտիվորեն աջակցելու պատրաստակամություն, համայնքի հարցերին, խնդիրներին և ընդհանուր բարիքին վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու պատրաստակամություն, համայնքի մյուս անդամների հետ երկխոսելու պատրաստակամություն՝ անկախ նրանց մշակութային պատկանելությունից
6. ուժերի ներածին չափով հանձն առնել համայնքի ներսում յուր զբաղեցրած պաշտոններին կամ դերերին կցված գործառույթների, պարտականությունների կամ պարտավորությունների կատարում.
7. համայնքի ներսում այլ անձանց նկատմամբ հաշվետվողականության և սեփական որոշումների և գործողությունների համար պատասխանատվություն կրելու զգացում:

## **Պատասխանատվություն**

«Պատասխանատվություն» եզրույթը բազմաթիվ իմաստներ ունի: Երկու իմաստները, որոնք հատկապես տեղին են ժողովրդավարության մշակույթի համար՝ դերային պատասխանատվությունը և բարոյական պատասխանատվությունն են: Առաջինը քաղաքացիական դիրքորոշման (տե՛ս վերը՝ կետ 6-ը) բաղադրիչ է. իսկ այստեղ մեզ հետաքրքրում է երկրորդը: Բարոյական պատասխանատվությունը սեփական գործողությունների նկատմամբ վերաբերմունքն է: Այն ծագում է, երբ անձն ունի կոնկրետ ձևով գործելու պարտավորություն և արժանանում է գովասանքի կամ պարսավանքի՝ այդ եղանակով տվյալ գործողությունը կատարելու կամ չկատարելու համար: Գովասանքի կամ պարսավանքի արժանացնելու համար անհատներին անհրաժեշտ պայմաններն են՝ սեփական գործողությունները մտազննելու ունակությունը, մտադրություններ ձևավորելու ունակությունը՝ կապված այն հանգամանքի հետ, թե իրենք ինչպես են գործելու, և իրենց ընտրած գործողությունները կատարելու ունակությունը: Պատասխանատվությունը կարող է համարձակություն պահանջել, քանզի սկզբունքային դիրքորոշում ստանձնելը հնարավոր է հանգեցնել ինքնուրույն գործելու, համայնքի նորմերի դեմ գործողություն ձեռնարկելու, հավաքական որոշումը բողոքարկելու իրավիճակի, ինչը գնահատվում է սխալ: Այսպիսով, հնարավոր է, որ քաղաքացիական դիրքորոշման և բարոյական պատասխանատվության միջև երբեմն լարվածություն առաջանա: Սեփական գործողությունների նկատմամբ պատասխանատու մոտեցումը, հետևաբար, ներառում է՝



1. սեփական գործողությունների և դրանց հնարավոր հետևանքների նկատմամբ որդեգրել ներհայեցողական ու խոհուն մոտեցում.
2. որոշարկել սեփական պարտականությունները և պարտավորությունները և թե ինչպես պետք է գործել կոնկրետ իրավիճակում՝ հիմնվելով մեկ արժեքի կամ մի շարք արժեքների վրա.
3. որոշում կայացնել ձեռնարկվելիք գործողությունների վերաբերյալ՝ հաշվի առնելով առկա հանգամանքները.
4. համախառնախառն գործողություն ձեռնարկել (կամ գործողությունից խուսափել)՝ որպես ինքնուրույն գործիչ.
5. պատրաստ լինել հաշվետու լինելու սեփական որոշումների և գործողությունների բնույթի կամ հետևանքների համար.
6. պատրաստ լինել գնահատական տալ և դատել սեփական անձը.
7. պատրաստ լինել համարձակ գործելու, եթե դա անհրաժեշտ է համարվում:

### **Ինքնավստահություն**

Ինքնավստահությունը վերաբերմունք է սեփական անձի նկատմամբ: Այն ենթադրում է դրական համոզմունք սեփական անձի կողմից ձեռնակրված գործողությունների նկատմամբ՝ պահանջվում է նպատակին հասնելու համար: Այս համոզմունքից բխում են հետագա համոզմունքներն այն մասին, որ անձը կարող է հասկանալ, թե ինչ է պահանջվում, համապատասխան դատողություններ կատարել, ընտրել աշխատանքը կատարելու համապատասխան մեթոդներ, հաջողությամբ շրջանցել խոչընդոտներ, ազդել կատարվող երևույթների վրա և սեփական դերն ունենալ իր և այլոց կյանքի վրա ազդող իրադարձություններում:

Ինքնավստահությունը ներառում է՝

1. հավատ՝ հարցերը հասկանալու, դատողություններ անելու և առաջադրանքների կատարման ճիշտ մեթոդներ ընտրելու յուր ունակության նկատմամբ.
2. հավատ՝ կոնկրետ նպատակների իրագործման համար պահանջվող գործողության ուղղություններ կազմակերպելու, իրագործելու և հավանական խոչընդոտները հաղթահարելու յուր ունակության նկատմամբ.
3. նոր մարտահրավերները լուծելու վերաբերյալ վստահության զգացում.
4. վստահության զգացում ժողովրդավարական մասնակցության և ժողովրդավարական նպատակների իրագործման համար անհրաժեշտ համարվող գործողություններ ձեռնարկելու նկատմամբ (այդ թվում՝ պատասխանատվության կանչել իշխանության և ուժի դիրքերում գտնվողներին՝ իրենց այն որոշումների կամ գործողությունների համար, որոնք համարվում են կողմնակալ կամ անարդար).
5. վստահության զգացում՝ մշակութային այլ պատկանելություն ունեցող անձանց հետ միջմշակութային երկխոսության մեջ մտնելու վերաբերյալ :

### **Հմտություններ**

Հմտությունը՝ խրթին, լավ կազմակերպված օրինաչափությամբ մտածելու կամ հարմարվողական վարքագիծ դրսևորելու կարողությունն է՝ կոնկրետ արդյունքի կամ նպատակի հասնելու համար:

Ժողովրդավարության մշակույթի համար կարևոր է հմտությունների ութ խումբ:



## **Ինքնակրթվելու հմտություններ**

Ինքնակրթվելու հմտություններն նրանք են, որոնց անհատը պետք է հետամուտ լինի, կազմակերպի և գնահատի՝ հանուն սեփական ուսումնառության, իր կարիքներին համապատասխան, ինքնաուղղորդվող և ինքնակարգավորվող եղանակով՝ առանց այլոց հրահրման: Ինքնուրույն սովորելու հմտությունները կարևոր են ժողովրդավարության մշակույթի համար, որովհետև դրանք անհատներին հնարավորություն են տալիս ինքնուրույն ծանոթանալ քաղաքական, քաղաքացիական և մշակութային հարցերին ու խնդիրներին և դրանց լուծման համար կիրառել բազմաթիվ և տարատեսակ հեռու և մոտիկ աղբյուրներ, ոչ թե այդ հարցերի մասին տեղեկությունների ստացման համար հիմնվել իրենց անմիջական շրջապատում գտնվող գործակալների վրա: Ինքնակրթվելու հմտությունները ներառում են հետևյալ ունակությունները կամ հմտությունները՝

1. Ճանաչել սեփական կրթական կարիքները. այս կարիքները կարող են բխել գիտելիքի կամ ընկալման պակասից, հմտությունների պակասից կամ դրանց վատ տիրապետումից կամ դժվարություններից, որոնք ծագել են ներկայիս մոտեցումների կամ արժեքների հետևանքով.
2. Ճանաչել, տեղակայել և գնահատել տեղեկատվության, խորհրդատվության կամ ուղղորդման հնարավոր աղբյուրները, որոնք անհրաժեշտ են այս կարիքները հասցեագրելու համար. այս աղբյուրներից կարող են լինել անձնական փորձը, այլոց հետ փոխազդեցություններն ու քննարկումները, այլ մշակութային պատկանելության կամ այլ համոզմունքներ, կարծիքներ կամ աշխարհայացք ունեցող անձանց հետ շփումները և տեսողական, տպագիր, հեռուստատեսային և թվային մեդիան.
3. դատողություն անել տեղեկատվության, խորհրդատվության կամ ուղղորդման տարբեր աղբյուրների հուսալիության վերաբերյալ, գնահատել դրանք՝ հնարավոր կողմնակալության կամ խեղաթյուրման տեսանկյունից, և ընտրել առկա աղբյուրներից ամենանպատակահարմարը.
4. մշակել և ծանոթանալ տեղեկատվությանը, կիրառել ուսումնառության առավել նպատակահարմար ռազմավարություններ և մեթոդներ, կամ ընդունել և հետևել ամենահուսալի աղբյուրներով տրված խորհուրդներին կամ ուղղորդմանը, ճշգրտումներ կատարել անձի գիտելիքի, ընկալումների, հմտությունների, վերաբերմունքի կամ արժեքների ցանկում.
5. մտածել ուսանածի, գրանցած առաջընթացի մասին, գնահատել կրթության մեջ կիրառված ռազմավարությունները և եզրահանգումներ կատարել հետագա ուսումնառության վերաբերյալ (որը միգուցե դեռևս հարկ կլինի ձեռնարկել), և ուսումնառության նոր ռազմավարությունների վերաբերյալ, որոնք թերևս պետք է ձեռք բերել:

## **Վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ**

Վերլուծական և քննադատական հմտությունները կազմված են փոպկապակցված հմտությունների մեծ և բաղադրյալ համախմբից: Վերլուծական մտածողության հմտությունները նրանք են, որոնք պահանջվում են ցանկացած տեսակի նյութեր (օր.՝ տեքստեր, փաստարկներ, մեկնաբանություններ, հարցեր, իրադարձություններ, փորձառություններ)՝ համակարգված և տրամաբանական եղանակով վերլուծելու համար: Դրանք ներառում են հետևյալ ունակությունները կամ հմտությունները՝

1. վերլուծության ենթարկվող նյութերի համակարգված բաժանում բաղադրիչ տարրերի, և այդ բաղադրիչների՝ տրամաբանական եղանակով կազմակերպում.





2. յուրաքանչյուր բաղադրիչի իմաստի (իմաստների) որոշարկում և մեկնաբանում՝ այդ տարրերը համեմատելով և համադրելով արդեն իսկ հայտնի տարրերին, և նմանությունների և տարբերությունների վերհանում.
3. այդ բաղադրիչների՝ միմյանց հետ կապված լինելու քննում և դրանց միջև առկա կապերի (տրամաբանական, պատճառահետևանքային, ժամանակավոր) վերհանում.
4. տարրերի միջև առկա հակասությունների, անհամապատասխանությունների կամ շեղումների վերհանում.
5. առանձին տարրերի հնարավոր այլընտրանքային իմաստների և հարաբերությունների վերհանում, նոր տարրերի ձևավորում, որոնք, հնարավոր է, չկան ամբողջի մեջ, այդ տարրերի համակարգված փոփոխում՝ ամբողջի վրա ներգործությունները որոշելու համար, և քննված տարրերի նոր սինթեզի ստացում. այլ կերպ ասած՝ նոր հնարավորությունների և այլընտրանքների մասին պատկերացում և դրանց բացահայտում.
6. վերլուծության արդյունքների կազմակերպված և կապակցված եղանակով համախմբում՝ ամբողջի մասին տրամաբանական և հիմնավոր եզրակացություններ կազմելու համար:  
Քննադատական մտածողության հմտությունները կազմված են այն հմտություններից, որոնք պահանջվում են ցանկացած տեսակի նյութի մասին դատողություններ անելու և գնահատելու համար: Ըստ այդմ, դրանք ներառում են հետևյալ ունակությունները կամ հմտությունները՝
  1. գնահատումներ կատարել՝ ներքին շաղկապվածության հիմքով և շաղկապվածության հիման վրա՝ ապացույցների և փորձի առկայության պայմաններում.
  2. դատողություններ անել՝ արդյոք վերլուծվող նյութերը վավեր, լիարժեք, ընդունելի, հուսալի, համապատասխան, օգտակար և/կամ համոզիչ են թե՛ ոչ.
  3. ընկալել և գնահատել նյութերի համար հիմք ծառայած կանխակալ կարծիքները, ենթադրությունները և տեքստային ու հաղորդակցային պայմանականությունները.
  4. աշխատել ոչ միայն նյութերի բառացի իմաստի, այլ նաև դրանց ավելի լայն՝ հռետորական նպատակի հետ, ներառյալ այն մարդկանց շարժառիթները, մտադրություններն ու օրակարգերը, որոնք ստեղծել են դրանք (քաղաքական հաղորդակցության պարագայում սա ներառում է պրոպագանդան վեր հանելու ունակություն և այդ պրոպագանդան ստեղծած անձանց շարժառիթները, մտադրություններն ու նպատակները ապակառուցելու/ապակողավորելու ունակություն).
  5. նյութերը տեղավորել այն պատմական համատեքստում, որտեղ դրանք ստեղծվել են՝ օգնելու համար տվյալ նյութերի մասին գնահատողական դատողությունների կատարմանը.
  6. առաջ քաշել և մշակել տարբեր այլընտրանքային տարբերակներ, հնարավորություններ ու լուծումներ և դրանք ներկայացնել նրանց, ովքեր ներկա են քննարկվող նյութերում.
  7. կշռադատել առկա տարբերակների առավելությունները և թերությունները. սա ներառում է ծախսաարդյունավետ վերլուծություն (ներառյալ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարները), ռեսուրսների վերլուծություն (գնահատելով՝ արդյոք յուրաքանչյուր տարբերակի համար պահանջվող ռեսուրսները գործնականում հասանելի են, թե՛ ոչ) և ռիսկի վերլուծություն (պատկերացում կազմել յուրաքանչյուր տարբերակի հետ կապված ռիսկերի մասին և գնահատել դրանք ու թե ինչպես կարելի է դրանք կառավարել).
  8. կազմակերպված և տրամաբանված կերպով համախմբելով գնահատողական գործընթացի արդյունքները՝ տրամաբանական և հիմնավոր փաստարկներ առաջ քաշել կոնկրետ մեկնաբանության, եզրակացության կամ գործողությունների ուղղության նկատմամբ՝ հիմնվելով հստակ և կոնկրետ չափանիշների, սկզբունքների կամ արժեքների և/կամ համոզիչ փաստարկների վրա.



9. գնահատողական գործընթացում ճանաչել սեփական կողմնակալ ենթադրությունները և կանխակալ կարծիքները և ընդունել, որ սեփական համոզմունքներն ու դատողությունները միշտ էլ պայմանական են ու կախված են սեփական մշակութային պատկանելությունից և տեսակետից:

Արդյունավետ վերլուծական մտածողությունը ներառում է քննադատական մտածողություն (վերլուծության ենթակա նյութերի գնահատումը), իսկ արդյունավետ քննադատական մտածողությունը ներառում է վերլուծական մտածողություն (սահմանելով գծերն ու ստեղծելով կապերը): Այդիսկ պատճառով, վերլուծական և քննադատական մտածողության հմտություններին փոխկապակցված են:

### **Գիտելիք և քննադատական մտածողություն**

Գիտելիքը տեղեկատվության այն ծավալն է, որին անձը տիրապետում է, այնինչ ընկալումն իմաստների ըմբռնումն ու արժևորումն է: «Քննադատական ընկալում» եզրույթն օգտագործվում է ժողովրդավարական գործընթացների և միջմշակութային երկխոսության համատեքստում իմաստների ըմբռնման և արժևորման անհրաժեշտությունը շեշտելու համար՝ ընկալվող և մեկնաբանվող թեմաների շուրջ ակտիվ մտածելու և քննադատաբար գնահատելու իմաստով (ի հակադրություն ինքնաբերաբար, սովորույթ դարձած և անմտածված մեկնաբանության):

Ժողովրդավարության մշակույթի համար անհրաժեշտ գիտելիքի և քննադատական ընկալման տարբեր ձևերը բաժանվում են երեք հիմնական խմբերի, որոնք բերված են ստորև:

### **Սեփական «ես»-ի գիտակցում և քննադատական ընկալում**

Ինքնաճանաչումն ու ինքնագիտակցությունը շատ կարևոր են ժողովրդավարության մշակույթում արդյունավետ և նպատակային մասնակցության համար: Սեփական «ես»-ի գիտակցումն ու քննադատական ընկալումն ունի բազմաթիվ տարբեր կողմեր, այդ թվում՝

1. սեփական «ես»-ի մշակութային պատկանելությունների իմացություն և ընկալում.
2. աշխարհի մասին սեփական տեսակետների և ճանաչողական, հուզական և դրդապատճառային ասպեկտների և կանխակալ մոտեցումների իմացություն և ընկալում.
3. սեփական աշխարհընկալման հիմքում ընկած ենթադրությունների և նախապաշարմունքների իմացություն և ընկալում.
4. ըմբռնում, թե սեփական աշխարհընկալումը, ենթադրությունները և նախապաշարմունքներն ինչպես են կապված և կախված անձի մշակութային պատկանելություններից և փորձառություններից, և իրենց հերթին ինչպես են դրանք ներգործում անձի ընկալումների, դատողությունների և ռեակցիաների վրա.
5. սեփական հույզերի, զգացմունքների և դրդապատճառների մասին իրազեկություն, հատկապես այլ անձանց հետ հաղորդակցություն և համագործակցություն պարունակող միջավայրերում.
6. սեփական կարողունակության և փորձագիտության սահմանների իմացություն և ընկալում:





## Գործնական համատեքստ

Սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման գործընթացը պարբերաբար, ամենօրյա հետևողական աշխատանք է պահանջում, որը կատարվում է ոչ միայն տեսական, այլ նաև գործնական համատեքստում՝ կազմակերպելով հայրենաճանաչողական էքսկուրսիաներ: Գործնական համատեքստում մեծ դերակատարում ունեն հայրենագիտական ճամփորդությունները, այցելությունները պատմամշակութային կոթողներ, թանգարաններ, պատկերասրահներ, հուշահամալիրներ: Այսպիսի էքսկուրսիաները ձևավորում են սովորողների մոտ ազգային մշակույթի իրական պատկերացումներ, հայրենասիրական ոգի, հարգալից վերաբերմունք սեփական երկրի ժառանգության նկատմամբ, պատասխանատվության զգացում այն պահպանելու և սերունդներին փոխանցելու :

Բազմիցս նշել են, որ ուսումնասիրվող առարկաները մեծ դեր ունեն այս գործընթացում և մենք՝ ուսուցիչներս համագործակցելով միմյանց հետ, սովորողներին ծանոթացնելով տարբեր ժողովուրդների մշակույթին, ձևավորում ենք հարգանք և հանդուրժողականություն այլոց մշակույթի նկատմամբ և սեփականի իրական պատկերացումների հիման վրա սովորեցնում ենք գնահատել մեր մշակույթի յուրօրինակությունը, որն էլ թույլ կտա կայուն արժեհամակարգով ընդունել ժամանակի նորարարությունները:

Ուզում են առանձնացնել հասարակագիտություն և պատմություն առարկաները, քանի որ երկուսն էլ դասավանդում են: Հասարակագիտություն առարկայի դասավանդման գործընթացում ուսումնասիրելով գեղագիտություն, բարոյագիտություն, ժողովրդավարություն, տնտեսագիտություն, իրավագիտություն, քաղաքագիտություն և մի շարք այլ բնագավառներ, սովորողը հնարավորություն է ունենում անընդհատ առնչվել տարբեր արժեքների հետ և ձևավորել սեփական աշխարհայացք:

Պատմություն առարկայի շրջանակներում պատմական տարբեր դեպքերն ու իրադարձությունները, պատմական տարբեր կերպարների հերոսական սխրագործությունները հնարավորություն են տալիս սովորողի մոտ ձևավորել վերլուծելու կարողություն, տրամաբանական միտք, քննադատական մտածողություն, դիրքորոշում երևույթի նկատմամբ, հայրենասիրական ոգի:



«ԱՐՄԱՀԻՐ» ԱԿ

Արժեհամակարգի ձևավորման վրա իր առանձնահատուկ դերն ունեն ազգային և պետական տոներին նվիրված դպրոցական միջոցառումները, ցերեկույթները՝ նվիրված պատմական հզոր կերպարներին: Աշակերտը կարողանում է մասնակից դառնալ և ունենալ դրական վերաբերմունք ինչ-որ

## Եզրակացություն

Ամփոփելով վերը նշված արժեհամակարգի մոդելը տալիս է կարողունակությունների հանգամանալից նկարագրություն, որոնք սովորողները պետք է ձեռք բերեն, եթե ցանկանում են դառնալ արդյունավետ ներգրավված քաղաքացիներ և այլոց հետ՝ որպես հավասարներ ապրել խաղաղ, մշակութապես բազմազան ժողովրդավարական հասարակություններում: Կրթության ոլորտի մասնագետները կրթական ծրագրերի պլանավորման, ուսուցման և ուսումնառության ու գնահատման միջոցով սովորողներին կդարձնեն ժողովրդավարական ու միջմշակութապես կոմպետենտ քաղաքացիներ:

Կրթական համակարգում առարկայի դասավանդման գործընթացում ձևավորվող արժեհամակարգը թույլ կտա հզորացնել սովորողներին հանդես գալու որպես հասարակության ինքնավար գործակալներ, որոնք կարողունակ են, ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի սահմաններում, ընտրելու և հետամուտ լինելու կյանքի սեփական նպատակներին: Օրինակ՝ եթե սովորողները զարգացնում են այլ մշակույթների, հանգմունքների, աշխարհայացքների և պրակտիկաների նկատմամբ բաց մոտեցում, ապա նրանք պատրաստակամ են լինում բացահայտելու և ուսումնասիրելու այլ տեսակետներ և ապրելակերպեր, որոնք ընկած են ավանդականներից այն կողմ, որոնցով գուցե իրենք մեծացել են՝ ընդլայնելով իրենց փորձառություններն ու հորիզոնները: Եթե նրանք ձեռք բերեն ինքնակրթվելու հմտություններ, իրենք կկարողանան ինքնուրույն սովորել այս նոր հեռանկարների և ապրելակերպերի մասին և կախված չեն լինի միայն իրենց անմիջական շրջապատի տրամադրած տեղեկություններից: Եվ եթե նրանք ձեռք բերեն վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ, իրենք ի վիճակի կլինեն այլընտրանքային տեսակետներն ու ապրելակերպերը և նոր տեղեկություններն ու գաղափարները ենթարկել մանրակրկիտ քննության և կկարողանան իրենց սեփական գնահատողական դատողություններն անել դրանց ընդունելի կամ ցանկալի լինելու վերաբերյալ: Բացի այդ, եթե երիտասարդները սովորեն արժևորել մարդկային արժանապատվությունն ու մարդու իրավունքները, մշակութային բազմազանությունն ու ժողովրդավարությունը, ապա այս արժեքները որպես հիմք կգործածեն իրենց բոլոր ընտրություններում և գործողություններում, և իրենց կյանքը պատրաստ կլինեն վարել՝ հարգելով այլ անձանց արժանապատվությունն ու մարդու իրավունքները և ժողովրդավարության սկզբունքները:

Հայ իրականության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի կրթությունը: Դպրոցը միշտ եղել է մեր ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման և առաջընթացի գրավականը: Այսօր Հայաստանում կրթական համակարգի բարելավումը, միջազգային ասպարեզում մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը դարձել է առաջնային գերխնդիր: Կարևոր է նաև ուսուցման ընթացքում միջառարկայական կապերի և մանկավարժների բազմակողմանի անդրադարձը արժեհամակարգի ձևավորման գործընթացին, որն էլ կնպաստի սովորողների կողմից արժեքների ներքնայնացմանը:

Ամփոփելով վերը նշված ամբողջ գաղափարախոսությունները՝ հարկ եմ համարում շեշտել այն միտքը, որ յուրաքանչյուր ուսուցիչ իր մանկավարժական ամբողջ գործունեության ընթացքում պետք է առաջնորդվի այն գաղափարով, որ ժամանակակից անհատի և քաղաքացու արժեհամակարգի ձևավորման հիմնաքար դնողը ինքն է և



պատասխանատվությամբ մոտենալով իր գործին պետք է ապահովի կայուն արժեհամակարգ, որի շնորհիվ սովորողը պատրաստ կլինի հարափոփոխ իրականության մեջ հանդուրժող վերաբերմունք ունենալ սեփական և այլ մշակույթների նկատմամբ և ապրել արժանապատիվ կյանքով:

## Գրականության ցանկ

1. Իրավասություններ ժողովրդավարական մշակույթի համար /ԵԽ /
2. Արժանապատվություն, հանդուրժողականություն /ՄԱԿ – Ձեռնարկ ավագ դպրոցի համար/
3. Փիլիսոփայության պատմություն /Ս. Ջաքարյան/
4. Ազգային արժեքի մասին, Մարդ և հասարակություն/ Հ. Միքայելյան/
5. Сочинения /Аристотел/
6. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան/